



2




Սեպտեմբերի 4-ի  
խորհուրդը

4

Հյուգոյի  
գործողությունների  
ծրագիր



6



Առաջընթացը  
սպառնում է...

7

ISSN 1829-149X



1 0 0 2 9



9 771829 149003

ով իրազեկված է, նա տաշտոանված է

# արտակարգ թերթ

N 29 (350)

03.9.2010 - 09.9.2010

www.emergency.am

## ՀՀ ԱԻ նախարար Արմեն Երիցյանի ուղերձը արտակարգ իրավիճակների աշխատակցի օրվա առթիվ



Սիրելի գործընկերներ, սրտանց շնորհավորում եմ ձեզ արտակարգ իրավիճակների աշխատակցի օրվա կապակցությամբ: Մաղթում եմ ձեզ առողջություն, երջանկություն, բարօրություն ու բարեկեցություն ձեր ընտանիքներին, մասնագիտական նոր սխրանքներ՝ ի նպաստ մեր երկրի ու ժողովրդի:

Սա հասարակ տոն է, այլ շատ աղետներ տեսած

եւ բազմաթիվ մարտահրավերների առջև կանգնած մեր երկրի որդեգրած նոր ռազմավարության խնդիրներից է, որպես մարդկանց հոգսերի ու կարիքների, նրանց դարձնելու ցավի նկատմամբ ուշադրության նոր դրսևորում, քանի որ մեզ պատուհասած ու սպառնացող բնական ու տեխնածին բազմաթիվ աղետ-պատահարները և անընդհատ ահագնացող մարտահրավերները պարզապես իրանայական դարձրին մեր երկրում ձեւավորված նոր պայմաններին համահունչ, բարեսիրտ, ուրիշին օգնելու պատրաստ եւ կամային բարձր հատկություններ ունեցող, մեր ժողովրդին արժանի Արտակարգ իրավիճակների հզոր նախարարության ստեղծումը:

Այսօր արդեն Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարությունը ձեր շնորհիվ տարածաշրջանի ազդեցիկ կառույցներից է: Մեր հրշեջ-փրկարարներն իրենց մարտունակությունն ու պրոֆեսիոնալիզմը վաղուց արդեն հաստատել են նույնիսկ մեր սահմաններից դուրս՝ Թուրքիայում, Պարսկաստանում, Վրաստանում, Ուկրաինայում, և բոլորովին վերջերս՝ Ռուսաստանի Դաշնությունում:

Մեր ընթացքն այսօր համաբայլ է միջազգային հանրությանը: Համագործակցում ենք միջազգային բազմաթիվ կազմակերպությունների և երկրների հետ: Օգտվելով առիթից՝ նրանց բոլորին հայտնում եմ իմ խորին երախտագիտությունը սրտացավ ու

արդյունավետ համագործակցության համար, միաժամանակ խոստանալով, որ իրենց օգնությունը ոչ միայն կծառայի մեզ, այլև մեր միջոցով՝ միջազգային հանրությանը:

Աղետների նվազեցման արդյունավետ ու գործունե համակարգի ձեւավորումը Հայաստանի համար ոչ միայն նյութական, սոցիալական, տնտեսական ու բնապահպանական նշանակություն ունի, այլև անմիջականորեն կապված է մեր երկրի ընդհանուր կայուն զարգացման հետ:

Սիրելի գործընկերներ՝ Հայաստանի փրկարար ծառայության, սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության, Հայպետհիդրոմետի, Տեխնիկական ամվտանգության ազգային կենտրոնի, Ռեզերվների գործակալության և նախարարության աշխատակազմի հարգարժան աշխատակիցներ, մենք վճռական խոսք ունենք ասելու մեր երկրի ամվտանգության ու բնական զարգացման գործում, մենք բաց ճակատով պիտի մայենք մեր ժողովրդին: Մեր ժողովուրդը պիտի վստահ լինի, որ երբ մոտենա փորձության ժամը, ամենաազդեցիկ պահին մենք նրա կողքին ենք, մեր կոչումը նրանց փրկությունն է: Իսկ աշխարհի որ ծայրում էլ լինի, մենք պատրաստ ենք ամենաբարձր մակարդակով ներկայացնելու մեր պետությունն ու ժողովրդին, մարդասեր, պրոֆեսիոնալ ու արիասիրտ հայի տեսակին:

## Հայ հրշեջ-փրկարարները Ռուսաստանում

15 օր շարունակ 28 հայ հրշեջ-փրկարարներ օրուգիշեր աշխատեցին Ռուսաստանում՝ պայքարելով անտառային հրդեհների դեմ, գյուղեր փրկեցին: Հայրենիք վերադարձան մեղավներով ու շնորհակալագրերով, իսկ Հայաստան կատարած այցի ժամանակ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևը հատուկ շնորհակալություն հայտնեց հայ հրշեջ-փրկարարներին՝ իրենց երկրին օգնելու համար:



Պավել Գյոգալյան, ԱԻՆ ՀՓԾ Փրկարար ուժերի վարչության պետի տեղակալ:

- Ինձ զանգահարեցին ու ասացին, որ անպայման պետք է խումբ հավաքել ու մեկնել հրդեհաշիջման: ՌԴ Արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալն էր գրություն ուղարկել, որի հիման վրա էլ կառավարությունը համապատասխան որոշում էր կայացրել: Կազմվեց 28 հոգանոց խումբ՝ իմ գլխավորությամբ, եւ ճապոնական 4 մեքենաներով մեկնեցինք:

ԼԴ Մորդովիայի հանրապետության Տենգուշեվոյի մարզը բավական ակտիվ ու խոցելի գոտի էր:

Մոտակայքում ատոմային վտանգավորություն ունեցող տարածքներ կային: Բավական լուրջ վտանգ կար, որ հրդեհը կարող էր հասնել այդ օբյեկտներին: Բացի դրանից, կային բազմաթիվ ուղիղ աշխատանքային գաղութներ: Եթե կրակը հասներ դրանց... իրենք էլ չգիտեին ինչ պիտի անեին,

որովհետեւ այդ քանակությամբ մարդկանց այդտեղից տեղափոխելը շատ բարդ հարց էր. պետք էր հատուկ հսկողություն, դատապարտյալներին տեղափոխելու հատուկ մեքենաներ, մի խոսքով՝ բավական լուրջ իրավիճակ էր ստեղծվել: Բայց ի պատիվ տեղացիների ու եկած ուժերի, այդ թվում՝ մեզ՝ խնդիրը լուծվեց, հրդեհը չհասավ կալանավարերին:

Ստորգետնյա հրդեհներ են շատ մարվել: Պետք էր ամբողջովին ջրածածկել տարածքը, այլ կերպ հանգցնել հնարավոր չէր: Մի քանի օր մեր ուժերը կենտրոնացրել էինք այդ աշխատանքի վրա, հարյուրավոր տոննաներով ջուր ենք տարել, լցրել, որ մարենք տորֆային հրդեհները:

Ես բավական բարդ ու մեծ հրդեհների մարման եմ մասնակցել, բայց այդ ծավալի ու բնույթի հրդեհ ոչ մի տեղ չեմ տեսել: >>> 4

## «Էլիտ Գրուպ». կյանքի նոր որակ



Սեյսմակայուն  
Էլիտար  
շինարարության  
առաջատարը  
տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպի» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպը» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ ամվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ»՝ բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ծիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպը» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



**Ջայաստանի փրկարար ծառայությունը զանգահարեք 1-01, 1-12**

դին իջեցվել է տանիքից ու հանձնվել շտապօգնության բրիգադին:

**Սպացել է այրվածքներ**

Օգոստոսի 27-ին Լոռու մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 19.00-ի սահմաններում տարբեր աստիճանների այրվածքներով Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր է տեղափոխվել Վրաստանի Հանրապետության քաղաքացի, 1960 թ. ծնված Միքայել Տոնոյանը:

Վանաձորի Լարեկացու թիվ 2 շենքի բակում ավտոմեքենայի կայծանոմները մաքրելիս Մ. Տոնոյանն օգտագործել է դյուրավառ նյութեր, որոնց բռնկման հետևանքով այրվածքներ է ստացել:

Բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել են միջին ծանրության:

**Պարահար ճանապարհին**

Օգոստոսի 28-ին, ժամը 13.05-ին Վայոց ձորի մարզային ոստիկանությունից ահազանգ է ստացվել, որ ավտոպատահար է տեղի ունեցել Երեւան-Մեղրի ավտոճանապարհի 165-րդ կիլոմետրում:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը:

Տեղում պարզվել է, որ «ՄԱԿ» մակնիշի THR 85871 պետհամարանիշի ավտոցիստեռնի (վարորդ՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ջիբրիլ Յակոբ Աբդուլ Ռահիմի) հետեւի կամրջակը կտրվել է, ինչի հետևանքով մեքենան շրջվել է, ու առկա է մազուրի արտահոսք:

Փրկարարների կողմից արտահոսքը դադարեցվել է ու մինչեւ ժամը 23.50-ը սահմանվել հերթապահություն:

**Մեքենան բախվել է արգելապարնեշին**

Օգոստոսի 28-ին Արագածոտնի մարզային ոստիկանությունից ահազանգ է ստացվել, որ ժամը 07.30-ի սահմաններում ավտոպատահար է տեղի ունեցել Վանաձոր-Ապարան ավտոճանապարհի 50-րդ կիլոմետրում՝ Ծաղկահովիտ գյուղի մոտ:

Դեռեւս չպարզված հանգամանքներում «ՎԱԶ-21110» մակնիշի 13 ՍԼ 937 պետհամարանիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից ու

բախվել ճամփեզրի արգելապարնեշին:

Պատահարի հետևանքով վարորդ, Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղի բնակիչ, 1957 թ. ծնված Գեղամ Խաչատրյանը եւ ուղևորներ՝ նույն գյուղի բնակիչ, 1993 թ. ծնված Հակոբ Լեւոնյանը, Վանաձորի բնակիչներ, 1984 թ. ծնված Արամայիս Միսկարյանը եւ 1980 թ. ծնված Արտակ Ամիրյանը ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ ու տեղափոխվել Ծաղկահովիտ գյուղի հիվանդանոց:

Ա. Միսկարյանը եւ Ա. Ամիրյանը, ստանալով բուժօգնություն, դուրս են գրվել հիվանդանոցից, իսկ Գ. Խաչատրյանը եւ Հ. Լեւոնյանը տեղափոխվել են Երեւանի «Արմենիա» բժշկական կենտրոն:

Ըստ բժիշկների՝ տուժածների վիճակը միջին ծանրության է:

**Ավտոմեքենան ընկել է ձորը**

Օգոստոսի 29-ին, ժամը 07.00-ին ոստիկանությունից ահազանգ է ստացվել, որ ավտոպատահար է տեղի ունեցել Երեւան-Աշոցք ավտոճանապարհի 145-րդ կիլոմետրում՝ Քեթի գյուղի մոտ:

Դեռեւս չպարզված հանգամանքներում «Միթուրիշի Պաշերո» մակնիշի 18 ՕՏ 747 պետհամարանիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից ու ընկել ձորը: Շրջված ավտոմեքենայից դուրս հայտնաբերվել է Գյումրիում տեղակայված ՌԴ ՋՈՒ գործառնապի ավագ լեյտենանտ, 1983 թ. ծնված Իվան Օրլովը՝ անգիտակից վիճակում, որին տեղափոխել են Գյուլբենկյանի անվան հիվանդանոց, իսկ երկրորդ տուժածին որոնելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը:

Հիվանդանոցում գիտակցության գալով՝ Ի. Օրլովը հայտնել է, որ ինքն ավտոմեքենայի մեջ մեռնակ է եղել, եւ փրկարարները դադարեցրել են որոնողական աշխատանքները:

**Մեքենան բախվել է ծառին**

Օգոստոսի 29-ին, ժամը 14.25-ին ահազանգ է ստացվել, որ ավտոպատահար է տեղի ունեցել Երեւան-Գյումրի ավտոճանապարհի 2-րդ կմ-ում, կան տուժածներ եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Աշտարակի հրշեջ-փրկարարական ջոկատից դեպքի վայր է մեկնել 3 հրշեջ-փրկարար:

Դեռեւս չպարզված հանգամանքներում «Մոսկվիչ» մակնիշի 21 LO 303 պետհամարանիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից ու բախվել ծառին, ինչի հետևանքով վարորդ, 1989 թ. ծնված Արմեն Մանուկյանը ստացել է տարբեր մարմնական վնասվածքներ:

Մինչ փրկարարների դեպքի վայր հասնելը՝ տուժածը տեղի ուժերով դուրս է բերվել ավտոմեքենայից ու տեղափոխվել Աշտարակի հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը բավարար է:

**Մեքենան խրվել է ճահիճը**

Օգոստոսի 31-ին, ժամը 04.03-ին ոստիկանությունից ահազանգ է ստացվել, որ Մարտունի-Վաղաշեն ավտոճանապարհի 1-ին կմ-ում տեղի է ունեցել ավտոպատահար եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Դեռեւս չպարզված հանգամանքներում «ՕՊԵԼ Ֆրոնտերա» մակնիշի 04 SO 022 պետհամարանիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից եւ խրվել ճահիճը, ինչի հետևանքով ուղևոր, 1965 թ. Գ. Մնացականյանը խեղդվել է:

Ավտոմեքենայի վարորդ՝ 1963 թ. ծնված Գ. Խլիվայանը կարողացել է դուրս ցատկել ավտոմեքենայից եւ չի տուժել:

Փրկարարների ուժերով գոհվածի դին եւ ավտոմեքենան դուրս են բերվել ճահիճից ու հանձնվել ոստիկանության աշխատակիցներին:

**Ալկոհոլային թունավորում**


Օգոստոսի 29-ին Շիրակի շտապօգնության ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ ժամը 03.45-ին ալկոհոլային թունավորումով Գյումրիի «Սամարիթեր» հիվանդանոց է տեղափոխվել Մայիսյան գյուղի բնակիչ, 1990 թ. ծնված Սերոբ Գրիգորյանը:

Ըստ բժիշկների՝ նրա վիճակը միջին ծանրության է: >>>

**միջազգային լուրեր**

**«Էրլ» փոթորիկը վերադառնում է**

Հյուսիսային Կառոլինայի, Վիրջինիայի եւ Մերիլենդի գուբերնատորներն իրենց նահանգներում արտակարգ դրություն են հայտարարել՝ «Էրլ» փոթորիկի մոտենալու կապակցությամբ:



Սպասվում է, որ արդեն սեպտեմբերի 2-ին այն կհարվածի ԱՄՆ-ին՝ Հաբերաս հրվանդանի շրջակայքում եւ կշարունակի շարժվել դեպի երկրի հյուսիս՝ Արևելյան մերձափի երկայնքով: Ափամերձ շրջաններում տարահանվում են բնակիչներն ու զբոսաշրջիկները:

Զգուշացվել են նաև Նյու-Յորք եւ Մասաչուսեթս նահանգները, քանի որ փոթորիկը շարժվում է դրանց ուղղությամբ: «Էրլ» շարժվում է 28 կմ/ժ արագությամբ: Փոթորիկների դիտարկման ազգային կենտրոնի տվյալներով փոթորիկը կրկին հասել է վտանգավորության չորրորդ աստիճանի:

**Փլուզում Սանկտ-Պետերբուրգում**

Սանկտ-Պետերբուրգի կենտրոնում փլվել է ուփարկանի դատարկ մի շենք: Տուժածներ չեն եղել: 1913 թ. կառուցված շենքը փլվել է ամբողջությամբ:

Շինարարության պետերբուրգյան կոմիտեի ղեկավարի կարծիքով, փլուզման պատճառներից մեկը կարող է լինել շենքի ամրացման աշխատանքների ընթացքում շինարարական կանոնների խախտումը, երբ կողո պատերից դուրս են բերվել չիրկիզվող պահարանները, որից հետո պատերը ճաքեր են տվել: Արդ-



յունքում ուփարկանի շենքում փլվել են ներքին ծածկերը եւ սանդղավանդակները, բայց արտաքին պատերը կանգուն են մնացել:

**Երկրաշարժ Հունաստանում**

4,3 մագնիտուդով երկրաշարժ է տեղի ունեցել Հունաստանում: Սեյսմոլոգների տվյալներ-



րով եպիկենտրոնը գտնվել է մայրաքաղաքից 57 կմ հյուսիս-արեւմուտք: Աթենքում երկրաշարժը զգացվել է հատակի ու կահույքի թույլ ցնցումների տեսքով: Տուժածներ եւ վնասված շինություններ չկան:

**Մահացել են սունկ հավաքողները. 17 զոհ՝ 9 օրում**

Անցյալ ամսվա վերջին օրերին իտալական Ապենինո Պիստոիեզե բնակավայրում տասնյոթ զբոսաշրջիկի դիակ է հայտնաբերվել: Օգոստոսի վերջին հետախույզում՝ ալպիական անտառներում բազմաթիվ սնկեր են աճում, եւ դրանք հավաքելու համար այստեղ են գալիս տեղաբ-

նակներն ու զբոսաշրջիկները: Ըստ մասնագետների, դժբախտ պատահարների պատճառը սունկ հավաքողների անուշադրությունն է եղել, քանի որ այդ վայրերը բավական վտանգավոր են: Որպես կանոն, գոհերն ընկել էին խոր ծորակների մեջ, որտեղ էլ նրանց հայտնաբերել են փրկարարները:



Նրանք սունկ հավաքողներին խորհուրդ են տալիս ոչ թե սովորական «սայթաքող, այլ հատուկ կոշիկներ հագնել մնացած զբոսանքների համար, պարտադիր բջջային հեռախոս ունենալ եւ անտառ գնալ խմբի հետ, ոչ թե միայնակ:



**<<< Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 186 դեպք, որոնց գերակշիռ մասը տեղի է ունեցել խոտածածկ տարածքներում:**

### Հրդեհ թունելում. կան զոհեր

Օգոստոսի 26-ին, ժամը 15.14-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Սեւան-Դիլիջան ավտոմայրուղում՝ Դիլիջանի թունելում: Սեւանից ու Դիլիջանից դեպի վայր է մեկնել մեկական մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 15.50-ին, մարվել՝ 16.15-ին: Դեռևս չպարզված հանգամանքներում բռնկվել է Դիլիջանի թունելով ընթացող «ԿԿ» մակնիշի 04 SL 165 պետհամարանիշի ավտոբուսը:

Հրդեհի հետեւանքով ավտոբուսի ուղեւորներ՝ 1982 թ. ծնված Քրիստինե Վանյանը եւ 2009 թ. ծնված Սուրիկ Մկրտչյանը տեղում մահացել են, իսկ վարորդ՝ 1971 թ. ծնված Գարիկ Մկրտչյանը, ուղեւորներ՝ 1962 թ. ծնված Կամո Շաբոյանը եւ 1973 թ. ծնված Նունե Աղաբեկյանը ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ ու տեղափոխվել Դիլիջանի հիվանդանոց, այնուհետեւ՝ Երեւանի ճառագայթային բժշկության եւ այրվածքների գիտահետազոտական կենտրոն:

Ըստ բժիշկների՝ Ն. Աղաբեկյանի առողջական վիճակը ծանր է, իսկ Գ. Մկրտչյանի ու Կ. Շաբոյանի վիճակները՝ միջին ծանրության:

## Արտակարգ շնորհավորանք Վաչագան Նիկողոսյանը, մեր պետը

Օգոստոսի 9-ին լրացավ 30-ամյակը փրկարարական ուժերի վարչության պետ, փ. ծ. գնդապետ Վաչագան Նիկողոսյանի ծննդյան վաթսուամյակը: Թերթն այդ օրերին արձակուրդում էր, եւ միայն այդ պատճառով ուշացավ մեր շնորհավորանքի խոսքը:

Ինֆորմացիոն կենտրոնի պետի տեղակալ, հետո՝ պետ... Չմոռանանք ասել, որ այս ընթացքում, ծառայությունն ավելի անթերի անցկացնելու համար, Նիկողոսյանն ավարտում է նաեւ Երեւանի պետական համալսարանի իրավագիտական ֆակուլտետը: Վերջապես, 2006-ից առ այսօր 30-ամյակ փրկարարական ուժերի վարչության պետն է, մեր պետը:



Սիրահանիչը մեր պետն է, նույն Վաչագան Նիկողոսյանը, որ կյանքում շատ բան տեսնելուց հետո էլ անսասան է պահել իր միջի բարությունը: Այդպիսի «գեներտիկ հիվանդությունից» հեշտ չեն բուժվում: Ու մեր ցանկությունն է մեր պետին. թե հիվանդությունն ու համբերատարությունը, գործի հանդեպ անմնացորդ նվիրումն ու նպատակահաստատված անկողություն կան: Թե ծախսողությունն է՝ թող լինի նրա երկարատեւ աշխատանքը 30-ամյակ փրկարարական ուժերի վարչության պետի պաշտոնում, ինչը հնարավորություն է հենց աշխատանքի բերումով ամեն օր ստիպված բարի գործեր կատարել: Եվ այս մաղթանքները մի տեսակ էգոիստական են հնչում, կարծես իր համար չեն, այլ մեզ, նրա աշխատակիցների համար:

Իհարկե, դժվար չէ կռահել, որ ընտանիքում էլ նա պակաս պահանջկոտ, համբերատար ու բարի չէ, ու թե երբեմն աշխատանքի ծանր պահերին նրա դեմքին երջանիկ ժպիտ է հայտնվում, ուրեմն գանգել է թոռներից մեկը:

**ՀՀ ԱԻՆ ՀԾԾ փրկարարական ուժերի վարչություն**

### Արտակարգ հանգիստ

Հուլիսի 20-27-ը ամառային հանգստի ճամբար կազմակերպեցին «Ով իրագրված է, նա պաշտպանված է» խորագրով: Կարողացի «Արտակարգ թերթ»-ի հետաքրքիր նյութերը, երեխաներին ներկայացրի փրկարար ծառայության աշխատակազմի եւ նրանց գործի կարեւորությունը: Երեխաները իմացան, որ աղետները երկիր ու սահման չեն ճանաչում, ուստի ամիսներ շարունակ իրագրված ապրել: Ներկայացրին փոքրիկ տեսարաններ, ուր աշակերտները հանդես եկան որպես փոքրիկ «աղետակներ»: Դպրոցի տնօրինությունը եւ աշակերտությունը գոհ էին ամառային արտակարգ ճամբարից:

Մոտենում է նոր ուսումնական տարին: Ծնորհավորում են բոլոր ուսուցիչներին եւ աշակերտներին այդ առթիվ եւ ցանկանում առանց փորձությունների ու աղետների տարի: Թող տարին լինի խաղաղ ու ստեղծագործ:

**Մարիամ Եսայան, 11-րդ դասարան Տավուշի մարզի Հինչինի միջն. դպրոց**

## սեյսմիկ պաշտպանություն

Ս.ք. օգոստոսի 19-ից 25-ը ՄՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցել են մեկ երկրաշարժ: 3 բալանոց սեյսմիկ ցնցումը տեղի է ունեցել օգոստոսի 24-ին Սեւան քաղաքից 10 կմ դեպի արեւելք:

**Տարածաշրջանում.** 3 բալ եւ ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել հինգ երկրաշարժ: Օգոստոսի 19-ին եւ 20-ին Իրանի տարածքում՝ խոյ քաղաքից համապատասխանաբար 24 կմ եւ 31 կմ հարավ-արեւելք, գրանցվել է 4-5 բալ եւ 4 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Օգոստոսի 21-ին Ադրբեջանում, Նախիջեւան քաղաքից 20 կմ հյուսիս, տեղի է ունեցել 3 բալ ուժգնությամբ սեյսմիկ ցնցում: Օգոստոսի 25-ին Իրանի Ահաբ քաղաքից 54 կմ դեպի հյուսիս-արեւմուտք գրանցվել է երկրաշարժ, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 4 բալ: Այդ օրը նույն ուժգնությամբ երկրաշարժ է տեղի ունեցել Վրաստանի Բարիսախտ քաղաքից 8 կմ հարավ-արեւմուտք:

**Տարածաշրջանից դուրս.** 6.0 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է երկու ուժեղ երկրաշարժ, որոնք տեղի են ունեցել խաղաղօվկիանոսյան օղակաձեւ հրե գոտում: Առաջինը գրանցվել է օգոստոսի 20-ին Պապուա Նոր Գվինեայում եւ ունեցել է 6.4 մագնիտուդ, երկրորդը՝ օգոստոսի 24-ին Մեքսիկայի ափամերձ գոտում, որն ունեցել է 6.1 մագնիտուդ: Երկրաշարժերը ցունամի չեն առաջացրել:

**ՄՊԱԾ գործակալություն**

## եղանակի տեսություն

### Օգոստոսի 25-ից սեպտեմբերի 1-ը դիտված հիդրոօդերեւութաբանական պայմանները ՀՀ-ում

Հանրապետությունում օգոստոսի 26-ին եւ 27-ին շրջանների գզալի մասում դիտվել է թույլ անձրեւ եւ ամպրոպ, մնացած օրերին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Արարատյան դաշտում՝ +36...+37°C, Սյունիքի հովիտներում՝ +34...+36°C, Տավուշում, Արարատյան դաշտի նախալեռներում՝ +32...+35°C, Լոռիում եւ Արցախում՝ +29...+32°C, Լեռնային շրջաններում եւ Սյունիքի նախալեռներում՝ +27...+31°C:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Լեռնային շրջաններում՝ +7...+12°C, Լոռիում եւ Սյունիքի նախալեռներում՝ +9...+13°C, Տավուշում՝ +11...+15°C, Արարատյան դաշտի նախալեռներում եւ Արցախում՝ +15...+17°C, Արարատյան դաշտում եւ Սյունիքի հովիտներում՝ +16...+20°C:



### Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում սեպտեմբերի 3-ից 7-ը սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ: Քամին՝ հարավային՝ 3-8 մ/վրկ արագությամբ: Օդի ջերմաստիճանը սեպտեմբերի 7-ին կնվազի 3-4 աստիճանով: Արարատյան դաշտում՝ երեւոյան ժամերին կդիտվի քամու ուժգնացում 15-20 մ/վրկ:

+10...+15°C, Արցախում՝ +18...+21°C:

Օդի ջերմաստիճանը առաջիկա 5 օրերին գիշերը Լեռնային շրջաններում կտատանվի +9...+14°C, Լոռիում՝ +10...+15°C, Տավուշում՝ +13...+18°C, Արարատյան դաշտի նախալեռներում՝ +15...+20°C, Արարատյան դաշտում՝ +16...+21°C, Սյունիքի հովիտներում՝ +15...+20°C, Սյունիքի նախալեռներում՝ +19...+21°C, ցերեկը՝ +35...+36°C:

Օդի ջերմաստիճանը ցերեկը Լեռնային շրջաններում կտատանվի +23...+28°C, Լոռիում՝ +26...+31°C, Տավուշում՝ +28...+33°C, Արարատյան դաշտի նախալեռներում՝ +32...+35°C, Արարատյան դաշտում՝ +35...+36°C, Սյունիքի հովիտներում՝ +32...+36°C, Սյունիքի նախալեռներում՝ +25...+29°C, Արցախում՝ +27...+30°C:

Երեւանում սեպտեմբերի 3-ից 7-ը սպասվում է առանց տեղումների եղանակ: Երեկոյան ժամերին սպասվում է քամու ուժգնացում 15-18 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը գիշերը կտատանվի +19...+21°C, ցերեկը՝ +35...+36°C:



# արենտի դասերը

## Սեպտեմբերի 4-ի խորհուրդը

**Հանրապետության բարձրագույն ղեկավարությունը՝ եւ նախագահ, եւ վարչապետ, այսօր մեծապես ուշադրություն ու հոգատարություն է դրսևորում տարաբնույթ արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության, աղետների ռիսկերի նվազեցման համակարգի նկատմամբ:**

Երբ կա քաղաքական կամքը՝ պրոֆեսիոնալիզմն ու նվիրումը կարող են հրաշքեր գործել: Այսօր մենք ունենք մեր ժողովրդի սերն ու համակրանքը, հարգանքն ու ամենակարեւորը՝ հավատն ու վստահությունը, որ ամենադժվար պահին իր կողքին կանգնող կա, իր դարդին դարձնան անող կա: Սա մի օրում ձեռք չի բերվել, եւ Արտակարգ իրավիճակների նախարարությունում՝ նախարարից մինչեւ շարքային հրշեջ, բարձր են գնահատում այս ձեռքբերումը եւ այնպիսի չափանիշ է սահմանված, որ փոքրիկ նահանջը դավաճանության է հավասար:

Արագ ու նպատակասլաց քայլերով մի ու արյուն է ստանում հզոր, կուռ ու միասնական նախարարության գաղափարը: Երբ նշանակումից տասն օր անց Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը հայտարարեց, որ ամռան վերջին մենք նախարարության նոր շենք ենք ունենալու, որ ցայտերիվ, իրար հետ քիչ առնչվող, բայց իրար կրկնող ծառայություններն ու գործակալությունները մի հարկի տակ են հավաքվելու, որ մեր նախարարությունը տարածաշրջանի հզոր կառույցներից է դառնալու, այսպես ձեւակերպենք, քչերն էին հավատում: Իսկ շատերը մեր ոչ այնքան բարվոք վիճակը համեմատում էին ռուսական ՄՍՍ-ի հետ. «բա լավ, գոնե մի ուղղափոռ էլ չունենանք»:

Այսօր արդեն հրավիրում ենք բոլորին մասնակցելու սեպտեմբերի 4-ին Արտակարգ իրավիճակների նախարարության նոր շենքի բացման արարողությանը, տեսնելու, թե ինչպես է կազմավորվում մեր արտակարգ քաղաքը՝ իր շենք-շինություններով, ուղղափոռային հրապարակով: Այո, հաշված օրերի ընթացքում մենք Ռուսաստանից նվիրատվության կարգով մի ուղղափոռ կստանանք:

Արտակարգի բերումով լինելով տարբեր երկրներում, միշտ երկակի զգացողությանը էինք համակվում՝ հիացում ու ակ-

տսանք: Հիացում, թե պետությունն ինչ հոգատարությամբ է շրջապատում իր հրշեջ-փրկարարին, ինչ մեծ ուշադրություն է դարձնում աղետների ռիսկերի նվազեցմանը, եւ ակտսանք. իսկ մերոնք չէ՞ն հասկանում սրա կարեւորությունը, էքսան հզոր աղետներ ենք տեսել, իսկ նորերից բոլորովին էլ ապահովագրված չենք: Ուղիղ հինգ տարի առաջ էր, փրկարար ծառայության տնօրենի հետ Բաստիլի գրավման օրը Ֆրանսիայում էինք: Հզոր շքերք էր, անցնում էին պաշտպանության նախարարության, ժամդարմերիայի տարբեր զորք ու ստորաբաժանումներ՝ իրենց տեխնիկայով, ժողովուրդն ուրախ ողջունում ու ծափահարում էր: Հանկարծ մի բուռն օվազիա բարձրացավ, ծափողջույններն ուղեկցվում էին հրձակից բարձր ճիչերով: Ուրախությունն անկեղծ էր ու երկարատեւ. անցնում էին հրշեջ-փրկարարները: Վերջին երեսուն տարիների ընթացքում, հարցումների համաձայն, այդ մասնագիտությունն ամենասիրված ու գնահատվածն է Ֆրանսիայում: Կատարվում է նաեւ այդ երազանքը: Սեպտեմբերի 4-ին առաջին անգամ մեր երկրում տեղի կունենա հրշեջ-փրկարարների տոնական շքերք:

Իսկ հիմա այն կարեւոր գործընթացի մասին, որի մասնակիցն ու ջատագովը պիտի լինենք մենք բոլորս: 2005 թվականից 185 պետությունների հետ Հայաստանը միացել է Հյուսիսի գործողությունների ծրագրին, որը բոլոր երկրներին կոչ է անում իրենց բոլոր ծրագրերում ու նախաձեռնություններում առաջնայություն համարել աղետների ռիսկերի նվազեցումը, հայտնաբերել հնարավոր բոլոր ռիսկերը, ստեղծել վաղ նախազգուշացման համակարգեր, բարձրացնել մարդկանց իրազեկվածությունն ու պատրաստվածությունը, ներդրել գիտելիքն ու նորարարությունը, հզորացնել արձագանքման ու վերականգնման կարողությունները:

Այսօր մենք ՄԱԿ-ի զարգացման գործակալության աջակցությամբ մշակում ենք աղետների ռիսկի նվազեցման ազգային գործուն համակարգ՝ ազգային պլատֆորմ, որը հնարավորություն կտա աղետների ռիսկի նվազեցման գործի մեջ ներգրավել բոլոր նախարարություն-գերատեսչություններին, կազմակերպություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական կազմակերպություններին, գիտական հիմնարկներին, մասնավոր ձեռնարկություններին, միջազգային կազմակերպություններին եւ ՋԼՄ-



ներին, առանց որոնց պարզապես անհնար է հաջողության հասնել: Որովհետեւ պլատֆորմի գլխավոր խնդիրը անվտանգության մշակույթի ներարկումն ու ձեւավորումն է, յուրաքանչյուրի գիտակցությանը հասցնելն է, սկսած ղեկավարներից մինչ մայր ու մանուկ, որ կանխել ավելի էժան ու արդյունավետ է, քան վաշ - վուշով թաղման փող հայթայթելն ու վնասներ փոխհատուցելը: Որ երկիրը բնակաչուն զարգանալ չի կարող, եթե աղետները գալիս սրբուն-տանում են զարգացման համար նախատեսված միջոցները: Դրա համար շատ կարեւոր է ամենատարբեր ոլորտների ռիսկերի գնահատումը, դրանց նվազեցման ուղիներն առաջնայությունը:

Լրագրողների գործը հեշտացնելու, առավել արդյունավետ դարձնելու համար, փորձում ենք արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվությունն առավել հասանելի ու մատչելի դարձնել: Բոլորս ենք հասկանում, որ արտակարգ իրավիճակների տեղեկատվության պակասը սոսկ տեղեկատվական սով չէ, այլ ասեկոսե ու խուճապ: Բոլոր դասագրքերում էլ գրված է, որ վատ լուրը լավ լուր է, որ դեպք-պատահարը առաջին էջի կամ առաջին սյուժեի նյութ է, կարճ ասած՝ արյունն ու զոհը լավ վաճառվող տեղեկատվական ապրանք են, բայց մենք բոլորս, բացի սոցիալական պարտքից, պարտք ենք մեր ժողովրդին՝ մեր ծնողներին ու մեր երեխաներին, մեր հարազատներին ու ընկերներին. չվնասենք նրանց, զուշացնենք վտանգների մասին, հուշենք, օրինակ ծառայենք, հիշեցնենք հնարավոր հետեւանքների մասին, իրենց վարքականոցներին

մասին, կառավարման մարմինների ձեռնարկած քայլերի, ծրագրերի ու պլանների մասին, որ մարդիկ իմանան, որ իրենք մեծակ չեն, որ պետությունն իրենց կողքին է:

Ամեն տարի մենք լրագրողների եւ նախարարություն-գերատեսչությունների լրատվականների պետերի ու մամուլի քարտուղարների համար սեմինարներ ենք կազմակերպում, ուսումնավարություններ: Այս տարի նույնպես հենց այս ամիս՝ սեպտեմբերի 11-ից 17-ը մեծ, հզոր միջազգային ուսումնավարություն ունենք ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում: Այնտեղ նույնպես կխաղարկենք միացյալ լրատվական կենտրոնի սցենարը ուժեղ երկրաշարժի ժամանակ:

Հատուկ լրագրողների եւ արձագանքող կազմակերպությունների համար, ինչպես նաեւ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողների համար գրքույկներ ունենք պատրաստած, որոնք շատ օգտակար են ոչ միայն աշխատանքում, այլեւ առօրյայում: Տվեք կարդալու նաեւ ձեր մերձավորներին, որովհետեւ ով իրագեկված է, նա պաշտպանված է:

Արտակարգ իրավիճակների նախարարության հաջողության գաղտնիքը նրա համագործակցելու ունակությունն է, երբ միջազգային կառույցներն ու երկրները տեսնում են միջազգային չափանիշներին համապատասխան ունակ ու կարողունակ գործընկերոջ: Ոչ մի երկիր առանց խոր հետազոտության հենց այնպես միլիոնավոր դոլարների աջակցություն չի տրամադրի:

Նիկոլայ Գրիգորյան

**1988 թ. Սպիտակի երկրաշարժը քաղաքացիական պաշտպանության համակարգի շատ հիմնահարցեր եւ դարձավ այդ համակարգի արմատական վերափոխման եւ վերակազմավորման հիմնական ազդակը:**

**1991 թ.** - ստեղծվեց Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը, նույն թվականին՝ Արտակարգ իրավիճակների պետական վարչությունը: Հայաստանում 1961 թվականից գործող ՔՊ շտաբն իր բոլոր կազմավորումներով դրվեց Արտակարգ իրավիճակների վարչության ենթակայության տակ:

Վարչությունը, ի տարբերություն անցյալում քաղպաշտպանության գործունեության ոլորտի ներ շրջանակի, թե՛ հայեցակարգային, թե՛ մասնագիտական ու թե՛ իրավական տեսակետներից նոր, լայն մոտեցում էր ցուցաբերում համակարգի ամբողջ աշխատանքի կազմակերպմանը՝ ելնելով Հայաստանում հավանական խոշոր աղետների ու վթարների վտանգի առկա-

## Սպիտակի երկրաշարժի գլխավոր դասը

յությունից, դրանց դասակարգումից եւ ռիսկի գնահատումից:

**1992 թ.** - ՀՀ կառավարության որոշմամբ Արտակարգ իրավիճակների պետական վարչությանը հատկացվեց տնտեսական բազա եւ ստեղծվեց կադրերի վերապատրաստման ինստիտուտ:

**1994 թ.** - Հայաստանը դարձավ Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության լիիրավ անդամ:

**1995 թ.** - Արտակարգ իրավիճակների պետական վարչությունը ստեղծեց 003 փրկարարական ջոկատը: Արտակարգ իրավիճակների պետական վարչությունը վերանվանվեց ՀՀ Արտակարգ իրավիճակների վարչություն:

**1996 թ.** - Արտակարգ իրավիճակների վարչությունը Գերմանիայի դաշնությունից ստացավ տասը «Մերսեդես-բենս» մակնիշի փրկարարական մեքենաներ՝ իրենց տեխնիկական միջոցներով:

**1997 թ.** - ՀՀ կառավարության սեպտեմբերի 4-ի թիվ 359 որոշմամբ ստեղծվեց արագ արձագանքման փրկարարա-

կան ջոկատը, որի գլխավոր խնդիրներն էին.

- աղետի գոտում փրկարարական աշխատանքների իրականացումը, ինչպես նաեւ արտակարգ պատահարների դեպքում բնակչությանը հնարավոր սեղմ ժամկետներում համապատասխան մասնագիտական օգնության ցուցաբերումը.

- աղետների եւ վթարների դեպքում վերականգնողական աշխատանքների կատարումը:

**1997 թ.** - ԱՒ վարչությունը վերանվանվեց ՀՀ կառավարության առընթեր արտակարգ իրավիճակների վարչություն:

**1999 թ.** - ՀՀ կառավարության որոշմամբ կատարվեցին ԱՒ-ի կառուցվածքային փոփոխություններ, որոնց արդյունքում քաղաքացիական պաշտպանության հանրապետական շտաբը վերափոխվեց ուժերի վարչության, իսկ կադրերի վերապատրաստման ինստիտուտը վերանվանվեց ճգնաժամային կառավարման ինստիտուտ:

**2001 թ.** - Պետական հրդեհային ծառա-

յությունն ընդգրկվեց ՀՀ կառավարության առընթեր Արտակարգ իրավիճակների վարչության կառուցվածքում:

**2005 թ.** - Արտակարգ իրավիճակների վարչությունը վերանվանվեց ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայության պետական կառավարման մարմին:

**2005-2006թթ.** - Բարեփոխումների արդյունքում ընդունվեց «Հայաստանի փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության շուրջ 35 որոշումներ, որոնցով կանոնակարգվեց Հայաստանի փրկարար ծառայության գործունեությունը:

**2008 թ.** - ՀՀ նախագահի որոշմամբ ստեղծվեց ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունը: Նորաստեղծ նախարարության կազմում ընդգրկվեցին Հայաստանի փրկարար ծառայությունը, Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը, Հայպետհիդրոմետը, Պետական ռեզերվների գործակալությունը եւ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը:

## Հայ հրշեջ-փրկարարները Ռուսաստանում

**<<< 1** Ասեմ, որ վերնատարած հրդեհներն այնպիսին են, որ ետևիցան, եւ մարդիկ կարող են շատ արագ հայտնվել կրակի մեջ: Այդպիսի հրդեհներ Հայաստանում չեն կարող լինել՝ տորֆային ու վերնատարած: Եթե վերնատարած հրդեհներ մեզ մոտ լինեն էլ, ապա չեն ունենա նման մակերես՝ մենք այդպիսի բարձր ստիվներ ու նման խտության անտառ չունենք:

Մեր օպերատիվության շնորհիվ էր, որ կարողացանք մարել վերնատարած հրդեհը: Հրդեհը սկզբնական զարգացման փուլում էր, չնայած բավական մեծ մակերես էր ընդգրկել, այդ ջերմությունն ու ծուխն այն աստիճանի չէր դեռ հասել, որ մենք չկարողանայինք մարել: Մենք կարողացանք՝ մի փոքր ռիսկի սահմանն էլ անցանք, մոտեցանք, այն դեպքում, երբ ռուսները մեր առջև այլևս ոչ մի խնդիր չէին դնում, բացի նրանից, որ արդեն կարելի է նահանջել: Իսկ մերոնք գնացին, դիմակայեցին ու կանխեցին:

100 անգամ կարող ես մարդուն բացատրել, թե ինչպիսին են անտառային հրդեհներն ու ինչպես է պետք դրանք մարել, սակայն ավելի լավ է մարդ մեկ անգամ իրապես մասնակցի նման հրդեհաշիջման: Այդպիսի ջերմություն ու սարսափազդու ծայրերի, խշշոցի-ֆշշոցների դիմաց ամեն մարդ չէ, որ կարող է ռիսկով կանգնել:

Մի տեղ բաց էին թողել հանդիպակաց կրակ, որ հանդիպի եկող կրակին, դա բավական արդյունավետ մեթոդ է անտառային հրդեհը մարելու համար: Այդտեղ էր նաև ինքնաթիռը: Բայց այդ հանդիպակաց կրակը մի կողմից դուրս էր եկել հսկողությունից: Մենք այդտեղ էինք աշխատում, 1000 մետրից ավելի փողորակագծեր փռելով՝ կարողացանք հաջողությամբ մարել նաև այդ հրդեհը:

Պիտի ասեմ, որ Ռուսաստանում մեր աշխատանքն ամենաշատն էր լուսաբանվում, քան՝ որեւէ այլ պետությանը: Մենք, իհարկե, հազվադեպ էինք հնարավորություն ունենում հեռուստացույց դիտելու, բայց գիտեցինք, որ հայերի աշխատանքը բավական քննարկվող թեմա է: Նաև տեղի հայ համայնքի ուշադրություն կենտրոնում էինք: Արդեն նույնիսկ մի քիչ անհարմար էինք զգում: Մարդիկ մեզ համար եւ ուտելիք էին բերում, եւ ծխախոտ, եւ ջուր: Առաջին օրից մինչև վերջին օրը մեր կողքին են եղել, նույնիսկ եկել են օդանավակայան՝ ճանապարհելու: Շատ էին ոգևորված, որ հայերը եկել են Ռուսաստան, օգնում են ու դա նաև իրենց հեղինակության հարցն է: Բոլորին ուզում են շնորհակալություն հայտնել:

### Արմեն Գեւորգյան, թիվ 11 հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատար

- Օգոստոսի 4-ն էր, գտնվում էի ծառայության մեջ: Ղեկավարությունից օմագահարեցին ու ասացին, որ անմիջապես մեկնեն օդանավակայան: Անձնագիրս վերցրեցի ու գնացի: Այնտեղ էին եւս 27 հրշեջներ ու ճապոնական ISUZU մակնիշի 4 հրշեջ մեքենաներ: Հենց այդ գիշեր մեկնեցինք Ռուսաստանի Նիժնի Նովոգորոդ քաղաք: Լուսադեմին տեղ հասանք, հրաման եղավ, որ պետք է մեկնենք Ռուսաստանի դաշնության Մորդովիայի հանրապետություն, որտեղ հրդեհավտանգավորության աստիճանը ամենաբարձր էր: Մորդովիայի Տենգուշեվո շրջան հասանք երեկոյան, տեղավորվելուց հետո մի ժամի չափ հանգստացանք, բայց հենց առաջին գիշերը տագնապով երկու մեքենա մեկնեց Իվանովո գյուղի հարակից տարածք, որտեղ անտառ էր վառվում, մեր օգնության կարիքը կար, քանի որ իրենց մեքենաները 2-3 տոննանոց էին, իսկ մեր մի մեքենան՝ 1 տոննա է: Հետո մեր պոմպերն են ավելի հզոր: Մեզ համար շատ անծանոթ էր տեղանքը: Նորություն էր նաև անտառ հանգցնելը, որովհետեւ այդ մաշտափի հրդեհ ոչ մեկս չէր հանգցրել: Հենց առաջին

օգնությունը շատ մեծ եղավ, մեր երկու մեքենաները մեկնեցին ու անմիջապես լուծեցին ջրի հարցն ու հրդեհաշիջմանը մեծ օգուտ տվեցին: Իվանովո գյուղը փրկվեց:

Տենգուշեվո մարզում հրդեհն առաջացում էր հիմնականում ցերեկվա 3-ից մինչև երեկոյան 8-ը: Եթե գիշերն էլ էր հրդեհ լինում, բնականաբար գնում էինք, եթե ոչ՝ ապա 3-8-ը հերթապահում էինք: Հատուկ շտաբեր էին ստեղծված: Մեր երկու մեքենաները պարտադիր մշտապես անտառում էին գտնվում, իսկ 2 մեքենա էլ՝ շտաբի տրամադրության տակ՝ որպես ռեզերվ: Ցանկացած սահազանգի ժամանակ մեկնում էինք, իհարկե, մեզ հետ հերթապահում էին նաև ջրատար մեքենաներ, ծանր տեխնիկա, իրենց տարածքի մեքենաները եւ այլն: Օգոստոսի 7-ին շատ մեծ հրդեհ ունեցանք, երկու մեքենայով մասնակցեցինք: Իրենց մոտ այսպիսի հասկացողություն կար՝ «аааааааааааааааааааааа», վերնատարած հրդեհ, եւ իրենց ասելով՝ իրենք այդ հրդեհները չէին հանգցնում: Պատկերացրեք՝ ծառերի



բարձրությունը 25-30 մետր էր, ծառերը վերելից էին այրվում: Ռուսները նման հրդեհները չէին հանգցնում, համարում էին անհնար ու վտանգավոր, թողնում էին, որ ծառերն այրվեն: Շատ զարմացան, որ մենք կարողացանք 500-1000 քմ տարածքով հրդեհը մարել: Արձագանքը բավական մեծ էր:

Ես 28 տարվա փորձ ունեմ, հարկովի հրշեջ-փրկարարական ուսումնարանն եմ ավարտել, շատ հրդեհներ են տեսել, բայց այս մաշտափի՝ երբեք: Դա մի աննկարագրելի բան էր: 7 օր մնացել ենք Տենգուշեվոյում, գյուղեր ենք փրկել: Այդ գյուղերից մի քանիսը ճանապարհի մի մասում էին գտնվում, մյուսները՝ մեկ այլ, անբողջովին անտառապատ էին: Հիմնական նպատակն էր, որ հրդեհը մի կողմից մյուսը չանցներ: Թե տեղի ղեկավարության, թե՛ բնակչության կողմից մեր աշխատանքները գնահատվել են շատ բարձր: 8-րդ օրը հրաման եղավ, որ մեկնենք Կրասնասլավոդսկայա քաղաք, քանի որ այդտեղ հրդեհավտանգավորության աստիճանը բարձրացել էր, հրդեհները մեծ տարածում էին ստացել: Առավոտյան մեկնեցինք այդտեղ, սակայն հասնելուց հետո մի քանի ժամ հանգիստ տվեցին, առավոտյան նորից կարգադրեցին հետ գնալ, քանի որ Տենգուշեվոյում վիճակը վատացել էր: Հետ գնացինք, հաջորդ օրը տագնապով մեկնեցինք Պերվոմայսկ քաղաք, որտեղ հրդեհն անտառում մեծ չափերի էր հասել, եւ կար վտանգ, որ տարածվեր դեպի Մորդովիայի պետական արգելանոց: Աշխատեցինք 12 ժամ անընդմեջ՝ առանց հանգստանալու: Հրդեհը մեկ վերնատարած էր, մեկ էլ իջնում էր, դառնում ստորգետնյա: Բավական բարդ իրավիճակ էր եւ ղեկավարության կողմից որոշում կայացվեց ներգրավել նաև ինքնաթիռ եւ ուղղաթիռ: Սակայն, եթե չլինեին մեր ու տեղի անձնակազմի ջանքերը, ուղղաթիռների ու ինքնաթիռի ջուրը մեծ օգուտ չէր տա, որովհետեւ այդ ջուրը մենք էլ չէինք զգում հաճախ: Այդ իրավիճակից էլ պատվով դուրս եկանք: Ամենակարեւորը պատասխանատվության զգացումն էր, մենք ոչ մի ռուպե չենք մոռացել, որ ներկայացնում

ենք Հայաստանը, որ բարձր պիտի պահենք մեր պետության ու հրշեջի պատիվը:

Օգոստոսի 20-ին վերադարձանք Նիժնի Նովոգորոդ, տվյալ օրը տեղի արտակարգ իրավիճակների մարզային վարչության կողմից մեր պատվին կազմակերպվել էր միջոցառում, ելույթ ունեցան վարչության պետը, գուբերնատորի տեղակալը, շատ բարձր գնահատեցին մեր աշխատանքը, անձնակազմի 28 անդամներին տրվեցին մեդալներ, պատվոգրեր, շնորհակալագրեր: Մեզ համար դա շատ շոյող էր: Հաջորդ օրը վերադարձանք Հայաստան:

### Վլադիմիր Պետրոսյան, թիվ 5 հրշեջ փրկարարական ջոկատի օդակի հրամանատար

- Ամենաշատը տպավորվել են վերնատարած հրդեհները, որոնք շատ արագ էին տարածվում: Պատկերացրեք՝ 30 մետր բարձրությունից կրակը մեծ արագությամբ գալիս է վրա: Արագությունը քամու դեպքում կարող էր հասնել մինչև 30 կմ/ժ: Սկզբից ծառի վերելի մասն էր այրվում, հետո նոր կրակն իջնում է ներքե: Եթե չհասցնես շատ արագ հանգցնել, անմիջապես կտարածվի: Որտեղ որ գնացել էինք, մոտակա տարածքներում շատ գյուղեր կային, հնարավոր էր, որ եթե մի քանի ռուպե ուշացնեինք կամ ջուրը չհերիքեր, գյուղերը լրիվ կվառվեին: Առաջին անգամ տեսանք այդ հրդեհը, լրիվ անծանոթ մի բան էր, բայց խուճապի չմատնվեցինք ու ամեն ինչ ստացվեց, նույնիսկ ավելի լավ, քան սպասում էինք: Այդ հրդեհները կրկնակի բարդ էին, որովհետեւ միաժամանակ եւ վերնատարած էին եւ տորֆային: Իսկ տորֆայինի ժամանակ ծառերն այրվում են միջից ու անձայն ընկնում են:

Մենք միշտ հերթապահության էինք, որովհետեւ հենց մի փոքր քամի էր լինում, տորֆային հրդեհը դառնում էր վերնատարած: Դրա համար էլ մոտ էինք լինում, որպեսզի հասցնեինք շուտ հանգցնել: Գնում էինք անտառներ, նայում էինք, ուսումնասիրում, տեսնում էինք՝ որտեղ է ծխում: Սա մեզ համար շատ մեծ փորձ էր, որովհետեւ երբեք նման հրդեհաշիջման չէինք մասնակցել: Եթե հարկ լինի, անպայման նորից կգնանք:

### Աշոտ Ջաքյան, թիվ 9 հրշեջ ջոկատի օդակի հրամանատար

- Տորֆային հրդեհի ժամանակ էլ բավական բարդ էր, կոշիկների տակացուները հալվում, մնում էին գետնի վրա: Մենք էլ գետնի վրա ծակ էինք բացում, մեջը ջուր էինք լցնում, բայց նման դեպքերում ջուր շատ-շատ էր գնում: Հիմա, երբ արդեն վերադարձել ենք, այստեղ էլ ենք գնում կանչեցիր, հրդեհ մարելու: Բայց ամեն հետ գալուց, երբ հարցնում են՝ ո՞նց էր, ասում ենք՝ հեջ,



դա հրդեհ չէր: Մենք արդեն տեսել ենք այդ անտառային հրդեհը, մնացածը մեզ համար արդեն փոքր բաներ են:

### Սուրեն Հարությունյան, 9-րդ հրշեջ ջոկատի վարորդ, մեխանիկ

- Շատ էինք զարմացել, որ այդ ամենի հետ մեկտեղ ջուր վերցնելու հարմարություններ չկային, ոչ գետ կար, ոչ արհեստական աղբյուրներ: Եղած գետերն էլ չորացել էին: Իրենք ճահճաշեր էին օգտագործում, բայց մեր մեքենաներն այդ ջրով չէին աշխատում, խցանումներ էին առաջացնում, մեր մեքենաները միայն մաքուր ջրով են աշխատում: Դրա համար ստիպված 30-40 կմ գնում էինք, որ ջուր վերցնենք:

Հիշում եմ՝ Սատիս գյուղում, երբ վառվող տները հանգցրեցինք, մի տատիկ զարմացավ, հարցրեց՝ հայերն ինչպե՞ս իմացան, որ այստեղ հրդեհ է: Մենք էլ կատակեցինք՝ իբր մեքենայի վրա արբանյակ ունենք, որի միջոցով բոլոր տեղերի հրդեհները տեսնում ենք: Տատիկը հավատացել էր, ասում էր՝ եկեք ցույց տվեք, որ մենք գյուղով դիմում գրենք իշխանություններին՝ մեզ մոտի մեքենաներում էլ արբանյակ դնեն, որ հրշեջները միշտ շուտ հասնեն դեպքի վայր: Գյուղերի բնակիչները մեզ ասում էին, որ արդեն հանգիստ կարող են քնել՝ իմանալով, որ հայերն այստեղ են: Մեր մեքենաների հետեւից խաչակնքում էին նույնիսկ:

Լուրերն էլ շատ արագ էին տարածվում. մինչև Սատիսից 24 կիլոմետր ընթացի դեպի Պերվոմայսկ, 100 մ շառավղով մեր կատարած գործի մասին արդեն տեղյակ էին:

### Հետգրություն

Անտառային հրդեհները Ռուսաստանում սկսվեցին հուլիսի վերջերին ու շարունակվեցին մոտ 1 ամիս: Առավելադեպ տուժեցին Բելգորոդի, Վորոնեժի, Իվանովսկայա, Լիդեցկի, Մոսկվայի, Ռյազանի, Տամբովի օրջանները, Մորդովիայի եւ Չուվաշիայի հանրապետությունները: Սահացավ 53 մարդ, մոտ 3500-ը մնաց անօթեւան: ՌԴ Մրակարգ իրավիճակների նախարար Սերգեյ Շոյգուի սլայդներով անտառային հրդեհները մարելու վրա 12 մլրդ ռուբլի է ծախսվել:

### ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հարգելի Արմեն Հենրիկի, Շնորհակալություն ենք հայնում Ձեզ՝ Ռուսաստանի սարածրը բռնած խոճոր բնական հրդեհների ժողովրդական օգնության ցուցաբերելու համար:

Օղբերափվ կերտվ աղեփի գոսի ուղարկված հակահրդեհային տեխնիկան ու սարավորումները, բարձր որակավորմամբ հրեջ-փրկարարների անձնագործողությունները եւ ժամանակակից հրեջ տրամադրի կիրառումն արժանապատիվ իրավիճակի ամենաբարդ հասկանալի մեկուն՝ Նիժեգորոդսկի մարզում, նոյսեց իրադրության կայունացմանը: Այս իսկադեպ մարտական աշխատանքը բարձր գնահատեցինք Ռուսաստանի ղեկավարությունն ու ժողովուրդը:

Հայ եւ ռուս հրեջների համագործակցությունը հրդեհների մարման ժամանակ ակնառու աղացույցն էր այն բանի, որ արդյունաբերական վթարների, սարերային աղեցների կանխման, դրանց հետեւանների վերացման ոլորտում համագործակցության մասին Ռուսաստանի ու Հայաստանի կառավարությունների միջև 1994 թ. օգոստոսի 17-ին կնքված համաձայնագիրը, ինչպես նաև մեր նախարարությունների միջև կադերի աշխուժացման մասին երկկողմանի դիվանագիտական ժողովուրդները համատեղ արձագանքման կազմակերպումն իրականացնելու հուսակի հիմն են:

ՍԵՐԳԵՅ ՇՈՅԳՈՒ, ՌԴ ՄԻ Նախարար  
24.08.2010





# արտակարգ իրավիճակների նախարարություն...

## Հյոգոյի 2005-2015 թթ. գործողությունների ծրագիր Ազգերի և համայնքների՝ աղետներին դիմակայելու ունակությունների զարգացում

Սկիզբը նախորդ համարներում (Հասկած)

### Վաղ ազդարարում

դ) Ստեղծել մարդկանց ուղղված վաղ ազդարարման այնպիսի համակարգեր, որոնց արձակած ահազանգերը ժամանակային առումով տեղին են և ընկալելի նրանց համար, ովքեր գտնվում են ռիսկի գոտում, և որոնք հաշվի են առնում մարդկանց խմբերի ժողովրդագրական, զենդերային, մշակութային ու կենսամիջոցների առանձնահատկությունները, ներառյալ ահազանգ ստանալու դեպքում ձեռնարկվող քայլերի վերաբերյալ ուղեկցությունը, որոնք նպաստում են ռիսկի կառավարիչների և այլ որոշում կայացնողների արդյունավետ գործունեությանը:

ե) Որպես վաղ ազդարարման համակարգերի մաս՝ ստեղծել տեղեկատվական համակարգեր, պարբերաբար ուսումնասիրել և քարտեզագրել դրանք ահազանգի/վթարի դեպքում արագ և համակարգված գործողությունների ծավալումն ապահովելու հեռանկարով:

զ) Ստեղծել ինստիտուցիոնալ կարողություններ, որոնք երաշխավորեն, որ վաղ ազդարարման համակարգերը, ինչպես ազգային, այնպես էլ տեղական մակարդակներով, ամուր ներառված են կառավարության քաղաքականության, որոշումների կայացման գործընթացների և արտակարգ իրավիճակների կառավարման համակարգերի մեջ՝ ենթարկվելով պարբերական համակարգային փորձարկումների ու կատարողական ցուցանիշների գնահատումների:

է) Իրականացնել Բոննում (Գերմանիա) 2003 թվականին կայացած վաղ ազդարարման թեմայով երկրորդ միջազգային համաժողովի<sup>13</sup> համեմատարարականները, ներառյալ վաղ ազդարարման համակարգերի լիարժեք արդյունավետությունը երաշխավորելու նպատակով այդ համակարգի բոլոր ճյուղերի ու դերակատարների միջև համակարգման և համագործակցության ամրապնդումը:

ը) Իրագործել փոքր կղզի-պետությունների կայուն զարգացման ապահովման Բարբադոսի գործողությունների ծրագրի շարունակությունը հանդիսացող Մավրիկիոսի ռազմավարության արդյունքները՝ ստեղծելով և ուժեղացնելով վաղ ազդարարման համակարգեր և ձեռնարկվելով աղետների նվազեցման ու արձագանքման այլ միջոցներ:

### Կարողություններ

թ) Նպաստել բնական աղետների ուսումնասիրություններ, դիտարկումներ, վերլուծություններ, քարտեզագրում, հնարավորու-

թյան դեպքում նաև բնական աղետների, խոցելի գործոնների և աղետների հետևանքների վերաբերյալ կանխատեսումներ անելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների, գիտական, տեխնոլոգիական, տեխնիկական կարողությունների ստեղծմանն ու կայուն գործունեությանը:

ժ) Նպաստել անհրաժեշտ տվյալների շտեմարանների ստեղծմանն ու դրանց կատարելագործմանը, ինչպես նաև զնահատման, վերահսկման և վաղ ազդարարման նպատակներով միջազգային, տարածաշրջանային, պետական ու տեղական մակարդակներով տվյալների ազատ փոխանակմանը:

ի) Ուսումնասիրությունների, գործընկերության, ուսուցման և տեխնիկական կարողությունների զարգացման միջոցով նպաստել ռիսկի գնահատման, վերահսկողության, վաղ ազդարարման գիտատեխնիկական մեթոդների և կարողությունների բարելավմանը: Ջարգացնել երկրի տեղանքային և տիեզերական ուսումնասիրությունների, տիեզերական տեխնոլոգիաների, արբանյակային հետազոտությունների, աշխարհագրական տեղեկատվական համակարգերի, վտանգների մոդելավորման և կանխատեսման, եղանակի, կլիմայի մոդելավորման, կանխատեսման և հարողդակցության միջոցների կիրառելիությունը, ինչպես նաև ռիսկի ծախսարդյունավետության ուսումնասիրությունն ու վաղ ազդարարման համակարգերը:

լ) Ստեղծել և ամրապնդել վիճակագրական տվյալների, վտանգների քարտեզագրման, դրանց ռիսկերի, հետևանքների և կորուստների մասին գրանցումների, վերլուծությունների ամփոփման և փոխանակման կարողությունները, ինչպես նաև օժանդակել ռիսկի գնահատման և մոնիթորինգի ընդհանրական մեթոդների մշակմանը:

### Տարածաշրջանային և ձեռավորվող ռիսկեր

խ) Ըստ նպատակահարմարության հավաքել և ստանդարտացնել տարածաշրջանային աղետների ռիսկերի, հետևանքների և կորուստների մասին վիճակագրական տեղեկություններն ու տվյալները:

ծ) Ըստ նպատակահարմարության՝ հաստատել տարածաշրջանային և միջազգային համագործակցություն՝ տարածաշրջանային և անդրասահմանային աղետների գնահատման և վերահսկման, տեղեկատվության փոխանակման և համապատասխան կարգադրությունների (օրինակ, ի թիվս այլոց, գետերի ավազանների կառավարմանը վերաբերող կարգադրությունների) միջոցով վաղ ազդարարման նպատակով:

կ) Ուսումնասիրել, վերլուծել երկարաժամկետ փոփոխությունները և զեկուցել

դրանց և ծագող խնդիրների մասին, որոնք կարող են բարձրացնել խոցելիության և ռիսկերի մակարդակը, կամ իշխանությունների և համայնքների աղետներին արձագանքելու կարողությունները:

Օգտագործել գիտելիքը, նորարարությունները և կրթությունը բոլոր մակարդակներով ամփոփումով և դիմակայման մշակույթ ձեռավորելու համար:

18. Աղետները կարող են զգալիորեն նվազեցվել, եթե մարդիկ քաջատեղյակ և շահագրգռված լինեն աղետները կանխելու և դրանց դիմակայելու մշակույթի հարցում, որն իր հերթին պահանջում է աղետների, խոցելիության և կարողությունների մասին համապատասխան գիտելիքի և տեղեկությունների հավաքում և սփռում:

### Առանցքային գործողություններ

#### Տեղեկատվության կառավարում և փոխանակում

ա) Բարձր ռիսկային գոտիներում մարդկանց տրամադրել աղետների ռիսկերի և պաշտպանական միջոցառումների մասին մատչելի և հասկանալի տեղեկատվություն, որպեսզի վերջիններս կարողանան ռիսկի նվազեցմանն ուղղված քայլեր ձեռնարկել և ձեռավորել դիմակայման ունակություններ: Այդ տեղեկատվությունը պետք է համապատասխանաբար ներառի ավանդական և տեղական իմացություններն ու մշակութային ժառանգություններն և նախատեսված լինի տարբեր թիրախային խմբերի համար՝ հաշվի առնելով տարբեր մշակութային և սոցիալական գործոնները:

բ) Ուժեղացնել բոլոր ճյուղերի և տարածաշրջանների աղետների գծով փորձագետների, կառավարիչների և պլանավորողների միջև կապերը և մշակել գործակալությունների կամ այլ կարևոր մասնակիցների կողմից ռիսկի նվազեցման տեղական պլանների կազմման ընթացքում կուտակված փորձագիտական իմացությունից օգտվելու ընթացակարգեր կամ բարելավել արդեն գոյություն ունեցող ընթացակարգերը:

գ) Խթանել և ամրապնդել աղետների ռիսկի նվազեցման հարցերով զբաղվող գիտական համայնքների և արհեստավարժների միջև երկխոսությունը և խրախուսել շահագրգիռ կողմերի, ինչպես նաև աղետի նվազեցման սոցիալ-տնտեսական ոլորտում ներգրավված աշխատակազմերի միջև գործընկերության ձեռավորումը:

դ) Աղետների նվազեցման գործընթացին նպաստելու նպատակով խթանել թարմ տեղեկությունների, հաղորդումների, տիեզերական տեխնոլոգիաների և հարակից ծառայությունների օգտագործումը, կիրառությունը և համրամատչելիությունը հատկապես ուսուցման կազմակերպման և տարբեր կատեգորիաների օգտագործողների միջև տեղե-



կատվության փոխանակման ոլորտներում:

ե) Միջնաժամկետ հեռանկարում ստեղծել տեղական, ազգային, միջազգային օգտագործողին մատչելի տեղեկատվություն, գույքացուցակներ և փոխանակման ազգային համակարգեր ու ծառայություններ, որոնց նպատակը ռիսկի նվազեցման լավագույն փորձի, ծախսարդյունավետ և հեշտ օգտագործող տեխնոլոգիաների մասին տեղեկատվության, ինչպես նաև ռիսկի նվազեցման քաղաքականությունների, պլաններից և դրանց ուղղությամբ ձեռնարկված միջոցներից քաղված դասերի փոխանակումն է:

զ) Նախքան շինարարական աշխատանքներ սկսելը, նախքան հողի առք և վաճառքը քաղաքաշինությունը ոլորտի հաստատությունները պետք է հանրությանը աղետների նվազեցման այլընտրանքային տարբերակների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնեն:

է) Թարմացնել աղետների ռիսկի նվազեցմանը վերաբերող միջազգային ստանդարտ տերմինաբանությունը ծրագրերի մշակման և հաստատությունների զարգացման, ինչպես նաև գործողությունների, հետազոտությունների, ուսումնական և հանրության իրազեկման ծրագրերում օգտագործման նպատակով և լայնորեն տարածել այն առնվազն ՄԱԿ-ի բոլոր պաշտոնական լեզուներով:

### Ծանոթագրություն.

13 Ինչդեպ խոհուրդ է սրվում Գլխավոր ասանքների թիվ 58/214 բանաձևում:

20-րդ դարի վերջին Հայաստանի բնակչությունը և ամբողջ հայ ժողովուրդը մեծ ցնցում ապրեց: Ամեն ինչ տեղի ունեցավ 1988թ. դեկտեմբերին, երբ հայ ժողովուրդը պատրաստ չէր նման աղետին, ինչպիսին էր՝ Սպիտակի երկրաշարժը: Տարերային աղետները՝ այդ թվում երկրաշարժերը, դասվում են այն երեւույթների շարքին, որոնք շեղում են բնական միջավայրի վիճակը մարդու կյանքի և տնտեսական գործունեության համար նպաստավոր առավելագույն սահմանից ու պատճառ են հանդիսանում մարդու անկանխատեսելի թայլերի համար:

Եթե մարդը գտնվում է դաշտում, ապա անգամ շատ ուժեղ երկրաշարժի հետևանքը կլինի միայն վախը, ուրիշ ոչինչ: Երկրաշարժը շատ կարճ է տևում՝ 15-25 վայրկյան, բայց քանի որ հանկարծակի է և գետինը փախչում է մարդու ոտքերի տակից, սկզբում նույնիսկ չի էլ հասկացվում, թե ինչ է տեղի ունենում, և միայն հետո է մարդը կռահում, որ տեղի է ունեցել երկրակեղևի ցնցում:

1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժը հանգեցրեց մեծ չափերի հասնող ավերածությունների և մարդկային զոհերի:

## Երկրաշարժը մեզ չի թուլացնի

Բնական աղետից մարդկային ու նյութական կորուստները շատ ավելին էին, քան մենք կարող էինք պատկերացնել:

Աղետը ծանր էր: Աննկարագրելի: Իհարկե, ոչինչ չի կարող փոխարինել սեփական մաշկի վրա այն դժոխքն զգալուն, ինչն այդ օրը զգացին մեր հայրենակիցները հենց աղետի գոտում: Անհրաժեշտ է, որ հայ ժողովուրդը միավորի իր ջանքերը լրջագույն այդ խնդիրը լուծելու համար, իսկ դրա համար նա պետք է լավագույնս իրազեկված լինի: Պետք է ճիշտ պատկերացում կազմել երկրաշարժի մասին, կարողանալ առավելագույնս ուսումնասիրել երկրաշարժից պաշտպանվելու վարքականությունները, ինչը զգալի չափով կնվազեցնի մեզ սպառնացող վտանգը:

Այսօր մեր հանրապետության դպրոցներում, մանկապարտեզներում մեծ աշխատանք է իրականացվում սեյսմիկ ռիսկը նվազեցնելու նպատակով: Կազմակերպվում են «Պատրաստ եղիր դիմակայելու աղետին» խաղ-վիկտորինաներ, ուսումնական «Տագ-

նապ» վարժանքներ՝ տարիանման ձևով և, իհարկե, ուսուցում՝ «Ինչպես պաշտպանվել երկրաշարժից» թեմայով: Կարելի է արդեն պարզ ճակատով կանգնել մարդանց առջև և խոսել Սեյսմիկ պաշտպանության արեւմտյան ծառայության բնակչության հետ տարվող աշխատանքների կենտրոնի կատարած աշխատանքների մասին: Վերջին երկու տարիների ընթացքում ազգաբնակչության սեյսմիկ կուլտուրայի բարձրացման աճ է գրանցվել: Երեսուրի քաղաքապետարանի կրթության վարչության կողմից հաստատված գրաֆիկով 2009 թ. ուսուցանվել է 13 234 հոգի, իսկ արդեն 2010 թ. առաջին կիսամյակում՝ 7215 հոգի:

Այս ամենը ցույց է տալիս, որ մեր ազգաբնակչությունը բավական լրջորեն հետաքրքրված է բնական աղետներից պաշտպանվելու միջոցներով, այդ թվում՝ երկրաշարժերից: Ամենուր շատ մեծ հետաքրքրությամբ են լսում և փորձում տիրապետել այն ամենին, ինչ մենք մատուցում ենք: Բոլորն էլ

քաջ գիտակցում են, որ մենք ապրում ենք երկրաշարժավտանգ գոտում և որ մեզանից յուրաքանչյուրին՝ անկախ տարիքից, պետք է լինել իրազեկ:

Ես շատ մեծ ուրախությամբ կարող եմ ասել, որ գոհ եմ մեր աշխատանքից: Ինչպես բժիշկն է ուրախանում իր յուրաքանչյուր կայացած վիրահատության համար, որ ես մի մարդու կյանք հաջողվեց փրկել, այնպես էլ մենք յուրաքանչյուր դասարանից դուրս գալուց հետո, մանավանդ՝ երբ տեսնում ենք երեխաների ոգեւորությունը: Ես համոզված եմ, որ եթե Աստված չանի, Մորից մեզ երկրաշարժ չի, ինչպես եղավ Սպիտակում, այն երեխաները, որոնք գեթ մեկ անգամ լսել են «Ինչպես պաշտպանվել երկրաշարժից» թեման, անպայման իրենց սովորածը կկիրառեն:

Եվ մինչև անգամ երկրաշարժը... մեզ չի թուլացնի:

Ով իրազեկված է, նա պաշտպանված է:

### Անուշ Ավանեսյան

Երկրաբան-երկրաֆիզիկոս ՄՊԱՄԸ ԲՏԱԿ-ի ուսումնական բաժնի վարիչ

# մասնագետի անկյուն



## Տեխնիկական առաջընթացը սպառնում է մարդկության գոյությանը

**Կա կարծիք, որ մարդն իր պատմության ընթացքում կատարել է չորս հայտնագործություն, եւ այդ հայտնագործություններն են ապահովել ու ապահովում մարդկության առաջընթացը: Մնացած բոլոր հայտնագործությունների հիմքում ընկած են հենց այդ չորսը:**

Դրանք են՝ անիվի գյուտը, թվերի գյուտը, տառերի գյուտը եւ էլեկտրամագնիսական ինդուկցիայի հայտնագործումը:

Երեք հայտնագործությունները կատարվել են շատ վաղուց, իսկ էլեկտրամագնիսական ինդուկցիան հայտնագործվեց 19-րդ դարի սկզբներին՝ ֆիզիկոս Լենցի կողմից, որի շնորհիվ մարդկությունը կարողացավ ստանալ էժան եւ մեծ հզորության էներգիա՝ էլեկտրական էներգիա: Այս հայտնագործությունն էր, որ ապահովեց գիտատեխնիկական առաջընթացը եւ մարդկության թռիչքածե գարգացումը:

Ք.հ. 1-ին դարում ապրող մարդկանց կենցաղը, արտադրական միջոցները եւ օգտագործած աշխատանքային գործիքներն առանձնապես չէին տարբերվում 5-րդ կամ 10-րդ դարերում ապրող մարդկանց կենցաղից, արտադրական միջոցներից եւ աշխատանքային գործիքներից: Հազարամյակների ընթացքում մարդկային մտքի գիտական հայտնագործությունները, ինժեներական նորարարությունները չէին ստանում գործնական կիրառում՝ անհրաժեշտ էներգիայի բացակայության եւ անմատչելի լինելու պատճառով:

Էլեկտրական էներգիայի գոյությունը հայտնի էր դեռ հին աշխարհում: Հին Եգիպտոսում գալվանական էլեմենտով ստացվող էլեկտրական էներգիան օգտագործվում էր էլեկտրոլիզի միջոցով զարդերի ոսկեպատման համար: Գալվանական էլեմենտով ստացվող էլեկտրականության միջոցով հին Եգիպտոսից հենց անգամ լուսավորում էին կացարանները՝ ստեղծելով ներկայիս էլեկտրական լուսավորման լամպերի նման լուսավորող պարույրային լուսավորիչներ: Այդ իրողությունը փաստում են Եգիպտական բուրգերում արված գրությունները եւ գալվանական էլեմենտի միջոցով լուսավորումը պատկերող փորագրությունները: Սակայն այդ ստացվող էլեկտրական էներգիան շատ քանակ էր եւ չէր ապահովում մեծ հզորություններ, գալվանական էլեմենտը չէր կարող նաեւ էլեկտրական էներգիայի արտադրության մշտական աղբյուր հանդիսանալ:

Նապոլեոն Բոնապարտի համազգեստի կոճակները այլուձևից էին, որովհետեւ այդ մետաղն ավելի թանկ էր, քան ոսկին, քանի որ այլուձևը ստացվում էր շատ քանակ արժեք ունեցող գալվանական էլեմենտից ստացված էլեկտրական էներգիայի կիրառմամբ՝ էլեկտրոլիզի միջոցով:

Էլեկտրամագնիսական ինդուկցիայի հայտնագործումն անմիջապես ստացավ գործնական կիրառում: Սկսվեցին կառուցվել հիդրոէլեկտրակայաններ, էլեկտրական էներգիայով աշխատող շարժիչներ, արդյունաբերական սարքավորումներ, կենցաղային սարքեր, կապի եւ հեռահաղորդակցության միջոցներ:

19-րդ դարի վերջերից սկսած պետությունների զարգացման պայմաններում արտադրության կարեւորագույն գործոններից է մեկ շնչին բաժին ընկնող էլեկտրական էներգիայի արտադրության եւ սպառման ծավալը: Նույնիսկ համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ Լենինն ուներ հետևյալ կարգախոսը՝ «Սովետական իշխանություն + էլեկտրիֆիկացիա = Կոմունիզմ»:

Էլեկտրամագնիսական ինդուկցիայի միջոցով էլեկտրական էներգիայի արտադրությունը հնարավորություն տվեց ներդնել մեծ հզորություն ապահովող արտադրական սարքավորումներ, հաստոցներ: Ստեղծել նոր մեքենաներ եւ մեխանիզմներ, որոնց աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ է ածխաջրածնային վառելիք (նավթ, քարածուխ, բնական գազ): Էլեկտրական էներգիայով աշխատող մեքենաների եւ մեխանիզմների շնորհիվ հնարավոր դարձավ կտրուկ ավելացնել ածխաջրածնային էներգակիրների արդյունահանումը: Սկսվեց նավթային բուսի դարաշրջանը:

Ներկայումս արտադրվող էլեկտրական էներգիայի առնվազն կեսն արտադրվում է ածխաջրածնային վառելիքի միջոցով՝ ջերմաէլեկտրակայաններում:

Ընդհանրապես 100 տարվա պատմություն ունեցող ածխաջրածնային վառելիքի հսկայածավալ եւ օր օրի ավելացող օգտագործումը հանգեցրել է միլիոնավոր տարիների ընթացքում ձեւավորված բնակչության պայմանների կտրուկ փոփոխությանը եւ բնական հավասարակշռության խախտմանը:

Բնությունը միլիոնավոր տարիների ընթացքում ձեւավորել էր թթվածնի, ջրի, ածխաթթու գազի քանակների բնական հավասարակշռություն եւ թթվածնի բնական վերարտադրման գործընթաց: Սակայն վերջին հարյուրամյակում՝ հատկապես 20-րդ դարի 20-ական թվականներից սկսած ածխաջրածնային էներգակիրների օգտագործումը հանգեցրեց թթվածնի, ջրի, ածխաթթու գազի քանակների բնական հավասարակշռության սրընթաց խախտման, որով եւ պայմանավորված են ներկայումս տեղի ունեցող կլիմայական անոմալիաները եւ գլոբալ ջերմացման պրոցեսը, որը գնալով ստանում է անդառնալի բնույթ եւ հանդիսանում մարդկության վերացման իրական սպառնալիք:


Տարեկան այրելով միլիարդավոր բարելների հասնող նավթամթերք եւ միլիարդավոր խորանարդ մետր բնական գազի ծավալներ, վերոգրյալ նյութերը այրման արդյունքում վերածվում են ածխաթթու գազի եւ ջրի, այրման համար սպառելով թթվածին: Ածխաջրածնային վառելիքի այրման հետեւանքով ստացված ածխաթթու գազի բնական վերարտադրմամբ (ռեգեներացիա) ծախսված թթվածինը չի վերականգնվում, քանի որ ածխաթթու գազից թթվածնի միակ բնական վերականգնում իրականացնող կամայ տարածքները գնալով նվազում են, իսկ ածխաջրածնային էներգակիրների օգտագործումը՝ ավելանում: Աշխարհի թոքերը հանդիսացող լատինամերիկյան եւ հնդկաչինի ջունգլիներն անխնայ ոչնչացվում են: Վերջին տարիներին մեծ տարածում գտած անտառային հրդեհները տարեկան ոչնչացնում են միլիոնավոր հեկտարների հասնող անտառածածկույթ, որոնց վերականգնման համար կպահանջվեն հարյուրամյակներ:

Մթնոլորտը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝ թթվածնի երկու ատոմ պարունակող մոլեկուլից բաղկացած շերտ եւ թթվածնի երեք ատոմ պարունակող մոլեկուլից (օզոնից) բաղկացած շերտ: Օզոնային շերտը գտնվում է մթնոլորտի վերին մասում եւ ապահովում է երկրի պաշտպանությունն ուլտրամանուշակագույն ճառագայթման կործանարար ազդեցությունից: Ածխաջրածնային էներգակիրների այրման հետեւանքով թթվածնի երկու ատոմ պարունակող մթնոլորտային շերտում թթվածնի պակասը լրացնելու համար օզոնային շերտում տեղի է ունենում եռատոմ թթվածնի մոլեկուլի քայքայում եւ անցում դեպի երկատոմ թթվածնի մոլեկուլի մթնոլորտային շերտ, որի հետեւանքով նվազում է օզոնային շերտի հաստությունը՝ երկրի վրա ավելացնելով ուլտրամանուշակագույն ճառագայթման ինդեքսը:

Ածխաջրածնային էներգակիրների հսկայական ծավալների այրման հետեւանքով ստացված ջրի քանակն ամեն տարի ավելացնում է երկրի վրա գտնվող գոլորշու եւ հեղուկ ջրի ծավալները, հանգեցնելով մթնոլորտային տեղումների ինտենսիվության եւ հաճախակիության ավելացմանը, առաջացնելով ջրհեղեղներ եւ առատ տեղումների հետեւանքով պայմանավորված սողանքներ, էրոզիոն պրոցեսներ: Արդյունքում ոչնչանում է հազարամյակների ընթացքում ձեւավորված բուսահողի շերտը:

Ածխաջրածնային էներգակիրների այրման արդյունքում անջատված ածխաթթու գազը, կանաչ տարածքների կրճատմամբ պայմանավորված բնական ռեգեներացիայի ծավալների նվազման հետեւանքով չի փոխակերպվում թթվածնի: Լինելով օդից ծանր՝ գազը կուտակվում է մթնոլորտի ներքին շերտերում: Ածխաթթու գազի մոլեկուլն ունի եռանկյունաձեւ բուրգի տեսք, եւ երկրագնդի մակերեսային անդրադարձած արեւի ինֆրակարմիր ճառագայթները բախվելով ածխաթթու գազի մոլեկուլներից նորից ուղղվում են դեպի երկրի մակերես, առաջացնելով այսպես կոչված ջերմոցային էֆեկտ՝ երկրագնդի մակերեսի լրացուցիչ ճառագայթում, որն էլ հանգեցնում է երկրագնդի մակերեսի տաքացման եւ կլիմայական պայմանների փոփոխության: Ածխաթթու գազի ծավալների աճի հետ զուգահեռ այս գործընթացը, այսինքն երկրագնդի գլոբալ տաքացումը գնալով արագանում է:

100 տարի առաջ մարդկության թվաքանակը չէր հասնում 2 միլիարդի, իսկ այժմ մարդկությունն անցել է 7 միլիարդի սահմանագիծը: Մարդկության թվաքանակի աճի հետ զուգահեռ աճում է կենցաղային աղբի քանակը, որը հիմնականում չի վերանշակվում, այլ կուտակվում է աղբավայրերում: Կենցաղային աղբի քայքայման հետեւանքով անջատվում են մեծ քանակությամբ մեթան, դիօքսիդներ եւ ածխաթթու գազ: Առաջին երկու գազերն իրենց ջերմոցային ազդեցությամբ 4 անգամ զերազանցում են ածխաթթու գազին, բացի այդ դիօքսիդները կոնցենտրացիոն են: Բնական գազի արտահանման աճին զուգահեռ ավելանում են մթնոլորտ արտանետվող մեթանի ծավալները: Բնական գազի հանքավայրերի շահագործման հետեւանքով արտահանված գազի 20-25 % կորչում է եւ արտանետվում մթնոլորտ՝ նպաստելով ջերմոցային էֆեկտի զարգացմանը:



Ածխաջրածնային էներգակիրների օգտագործման շարունակական աճի տեմպերով պայմանավորված կլիմայական փոփոխությունները կանխելու նպատակով 1996 թվականին հռչակվեց Կիոտոյի համաձայնագիրը, որին միացած պետությունները ստանձնեցին պարտավորություններ տարեցտարի նվազեցնել ածխաթթու գազի արտանետման ծավալները, ներդնել էներգախնայողական տեխնոլոգիաներ, կառուցել գազախնայողական նոր շոգեփոխիչներ, նվազեցնել ածխաջրածնային էներգակիրների օգտագործման ծավալները, էներգախնայողական տեխնոլոգիաների ներդրման հարցում օգնել զարգացող երկրներին:

Կիոտոյի համաձայնագրին չեն միացել արդյունաբերական երկու հսկաները՝ ԱՄՆ-ը եւ Չինաստանը: ԱՄՆ-ը հանդիսանում է ածխաջրածնային էներգակիրների գլխավոր սպառող երկիրը: Աշխարհում արտահանվող նավթի 45 %-ի սպառումը բաժին է ընկնում ԱՄՆ-ին: Մեկ լիտր բենզինի այրման համար սպառվում է այնքան թթվածին, որը մարդու կբավարարեր 45 օր:

Գլոբալ ջերմացումը հանգեցրել է հյուսիսային եւ հարավային բեւեռներում կուտակված սառցադաշտերի եւ սառցաբեկորների ինտենսիվ հալվելուն, հալվում են նաեւ լեռների գագաթների հավերժական սառցադաշտերը, որի հետեւանքով բարձրանում է համաշխարհային օվկիանոսի մակարդակը: Համաշխարհային օվկիանոսի մակարդակի բարձրացումը կհանգեցնի ցամաքային տարածքների ջրածածկմանը եւ բեւեռային կենդանիների ոչնչացմանը: Գլոբալ ջերմացման ներկայիս տեմպերի պահպանման դեպքում 2050-ական թվականներից կսկսեն հալվել Անտարկտիդայի ցամաքային հատվածի վրա գտնվող սառցալեռները, որի հետեւանքով համաշխարհային օվկիանոսի մակարդակը կտրուկ կբարձրանա՝ ջրածածկելով ծովափնյա պետությունների զգալի տարածքներ:

Գլոբալ ջերմացման գործընթացի կասեցումը համամարդկային խնդիր է: Անհրաժեշտ է, որ մարդկությունը հրաժարվի բնության անխնայ շահագործումից, ածխաջրածնային էներգակիրների արտահանման ծավալների ավելացումից, վերականգնի թթվածնի բնական ռեգեներացիայի համար այնքան անհրաժեշտ կանաչ տարածքները: Էլեկտրական էներգիայի արտադրական հզորությունների 70 %-ի արտադրությունն իրականացնի ատոմային վառելիքի միջոցով: Գլոբալ ջերմացման հիմնական պատասխանատվությունը կրում են արդյունաբերական զարգացած երկրները եւ կանխարգելման առումով բաժին պատկանում է նրանց: Պատրաստ են արդյոք զարգացած արդյունաբերական երկրները հրաժարվել բարեկեցիկ կյանքի որոշակի մասից, եթե եկել ոչ թե անձնական տրանսպորտով, հրաժարվել նավթային նոր հանքավայրերի շահագործման համար լատինամերիկյան ջունգլիների հետագա ոչնչացումից, ածխաջրածնային ռեսուրսների նկատմամբ վերահսկողության տեղադրում եւ անբարոյական մրցավազքից: Այս գիտական բացակայությունը կհանգեցնի գլոբալ ջերմացման գործընթացի անդառնալի բնույթին, որի հետեւանքով մարդկային մտքի արգասիքը կդառնա մարդկության ոչնչացման հիմնական պատճառը:

**Կարապետ Կարապետյան**  
ԲՏՊ վարչության մոնիթորինգի կենտրոնի տեխնիկական վարչության, հակաֆինանսական եւ հակաճառագայթային ռազմաճակատային բաժնի ղեկավար

